

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Մ. Նալբանդյանի ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցը նրա գրական ժառանգության շուտամասիրված խորհրդներից մեկն է: Ընդհանուր է, մեծ հրապարակախոսը հատուկ գիրք կամ հոդված չի գրել ժողովրդական բանահյուսության մասին, բայց նա թողել է մի շարք ուշագրավ ակնարկներ ու մտքեր, որոնք դեռևս չեն ստացել իրենց արժանի գնահատականը:

Ժողովրդի բանավոր դեղարվեստական ստեղծագործության մասին Նալբանդյանի արտահայտած մտքերը կազմում են նրա գեղագիտական հայացքների ուրույն մի բաժինը: Դրանք ցրված են հեղինակի հրապարակախոսական, գրական-քննադատական, պատմա-բանասիրական գործերի մեջ և հատկապես Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վեպի քննությանը նվիրված նշանավոր «Կրիտիկա»-ում:

Նալբանդյանի հայացքները ժողովրդական բանահյուսության մասին ծրնունդ են առել ու զարգացել ժամանակի հետադիմական հոսանքների գեմով զաղափարական անհաշտ պայքարում, արտահայտելով հեղինակի խոր անավատը ժողովրդի նկատմամբ:

Ուշագրավ է այն ճիշտ գիրքորոշումը, որ ունեցել է Նալբանդյանը ծեսերի, արարողությունների ու ավանդությունների ստեղծման ու պահպանման գործում ժողովրդի խաղացած կարևոր դերի նկատմամբ: Իրեն հատուկ կրքոտությամբ նա անողոք քննադատության է ենթարկել բոլոր նրանց, ովքեր գիտակցորեն, թե չըմբռնելով, նսեմացրել կամ անտեսել են ժողովրդի այդ դերը՝ «ազգի» (իմա՝ հասարակ ժողովրդի—Ա. Ղ.)՝ սեփական և նրա կողմից ստեղծված որևէ արարողություն, ծես կամ ավանդություն կապելով սոցիալական վերնախավների հետ:

«Մենք կարծում ենք,— գրում է Նալբանդյանը,— թե իրավունք չկա, առանց դրական ապացույցներ ունենալու, ամեն մի հին ավանդության մնացորդ տեսնելու ժամանակ վազել թագավորների քամակիցը,— և անմիջապես ավելացնում,— ազգը մինչև թագավորության հասնելը, ստանում է և ստեղծում է իր ավանդությունները, ծեսերը և արարողությունները, որոնք, այո՛, թե թագա-

1 «Երբեք խոսելով ազգի վերաբերմամբ,— գրում է Նալբանդյանը,— մեր աչքի առջև ունենք հայոց հասարակ ժողովուրդը, և ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկ, որ արժաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերևույթից» (Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, չորս հատորով, Երևան, 1940—1949, հ. 1, էջ 452, «Հիշատակարան»):

վորների ժամանակ և թե նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցության տակ»¹:

Իր այս կարևոր ընդհանրացումը Նալբանդյանը հավաստել է ժողովրդական բանահյուսության խորը վերլուծման միջոցով, նշելով նրա սերտ կապը ժողովրդի տնտեսական-արտադրական կյանք ու կենցաղի, նրա հոգեբանության ու աշխարհայացքի հետ²:

Ըստ արժանվույն գնահատելով հասարակ ժողովրդի ստեղծագործական կարողությունները, Նալբանդյանը կարևոր ու շնորհակալ գործ է համարել նույն այդ ժողովրդի մեջ պահպանված լավագույն ավանդությունների ու երգերի «հանդես հանելու» գործը, կոչ արել ձեռնհաս մարդկանց շխնայելու իրենց ուժերը այդ ուղղությամբ:

«Ազգային ավանդությունքը որքան կարելի է, անշուշտ, արժա՛ն է քրքրել և դուրս բերել դարավոր փոշիների տակից, բայց ավանդությունք ենք ասում, որ իբրև մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլիլ, ծաղկիլ և պտուղ բերել»³:

Այլ առիթներով, անդրադառնալով Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպում բերված բանահյուսական ստեղծագործություններին, Նալբանդյանը իր «լիասիրտ շնորհակալությունն» է հայտնում «արգո հեղինակին», միաժամանակ հույս արտահայտելով, որ նա «ուրիշ անգամ ավելի շատ հանդես կանե այդպիսի տեղեկությունք և ավելի կատարելությամբ առաջ կտանի սկսածը»⁴:

Հակառակ իր ժամանակ և իրենից հետո հանդես եկած որոշ գիտնականների՝ ավանդական բանահյուսության «համազգային» կամ «համաժողովրդական» բնույթի մասին հայտնած հակապատմական հայացքների, Նալբանդյանը բանահյուսության մեջ բուն ժողովրդական ստեղծագործությունները տարբերել է սոցիալական վերնախավերի տրամադրություններն ու հոգեբանությունն արտացոլող երկերից, վեր հանելով առաջինների արժանիքները և, ընդհակառակը, սուր քննադատության ենթարկելով վերջինների հակաժողովրդական, վնասակար բնույթն ու էությունը:

Մ. Նալբանդյանը հիացմունքով է արտահայտվել. օրինակ, շղթայված Արտավազդի առասպելի մասին, որի մեջ աշխատավոր ժողովուրդը սիմվոլացրել է չարը սանձահարելու իր կորովն ու կամքը, դարբինների ձեռքով ամրացնել տալով աշխարհին կործանում սպառնացող Արտավազդի շղթաները: Նույն գրել է. «Ազգային ավանդություն է դարբինների սալը ծեծելը, որ Արտավազդը դուրս չդա ու աշխարհը չփանդե. և մենք մեծ ուրախություն զգացինք, երբ առանք (եր. 42), որ տակավին պաշտվում է այդ անտիկյան ավանդությունը. թեև այդ էլ կրոնական դույն է ստացել դարձյալ, որովհետև ավագ ուրբաթի զիշերն է միայն կատարվում: Բայց, ինչպես և է, այնուամենայնիվ ավանդությունը կենդանի է, և այն պատմական ավանդություն, որի լույս հիշելը բերում է մարդու երևակայության առջև ամբողջ հայ աշխարհը, որի վրայից արդեն գլորվել են շատ դարեր»⁵:

¹ Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 3, էջ 163:

² Տե՛ս նույն տեղում, էջ 161—163:

³ Նույն տեղում, էջ 137:

⁴ Նույն տեղում, էջ 142—143, 163:

⁵ Նույն տեղում, էջ 137—138:

Ճիշտ հակառակ կարծիք է հայտնել Նալբանդյանը Պոռշյանի «Սոս և Վարդիթերի» մեջ բերված Ականատեսի կրոնական ավանդության մասին, դրելով. «Բայց խոստովանում ենք, որ Ականատեսի ավանդությունը (եր. 108) չունի մի դորա նման արժեք: Անշուշտ, հեղինակը չէ շարադրել նորան, նա առնում է ազգի հասկացողությունից. բայց մենք մի փոքր առաջ ասածներս վերստին կրկնում ենք, թե դպրության և լուսավորության խորհուրդը այն չէ, որ ամեն անցած խավար լույս քարոզե, ամեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ որպեսզի փարատե այդ խավարը: Այդ տեսակ բաները, մեր կարծիքով զգուշության պետք ունին, և հեղինակը հանդես հանելով մի նմանօրինակ բան, պարտական է այնպիսի ընթացք տալ բանին, որ տասն և ինն դարու մեջ ութերորդ ամենախավար դարին արձագանք եղած չլինի»¹:

Նալբանդյանին զրադեցրել է նաև տարրեր ժողովուրդների բանահյուսական հուշարձանների մեջ եղած նմանությունների և այդ հուշարձանների փոխադարձ հարազատության կարևոր հարցը: Հակառակ իր ժամանակ գիտության մեջ իշխող տեսակետների, որոնց համաձայն հիշյալ նմանությունները բացատրվում էին կամ ժողովուրդների նախապատմական ցեղային ազգակցության, կամ էլ փոխառության հանգամանքով, Նալբանդյանը այդ երևույթը հիմնականում բացատրել է ժողովուրդների «բնական կամ ընկերային պայմանների» նմանության կամ ընդհանրության մատերիալիստական սկզբունքով:

Բնորոշ է այս տեսակետից «Կրիտիկա»-ի հետևյալ հատվածը, ուր խոսվում է հայկական և ադրբեջանական խաղերի ու տաղերի նմանության ու փոխադարձ հարազատության մասին. «...թուրքը և հայը գտնվում են այսօր գրեթե միևնույն աշխարհում, այդ աղգերը միևնույն հողի, միևնույն կերակրի միևնույն բնության ազդեցության են ենթակա: Մինչև շատ մոտ ժամանակներս գրեթե և միևնույն կառավարության տակ էին քաղաքականապես: Երկուքն էլ ասիացիք, երկուքն էլ արևելքիք և խորհուրդ, խոսելու ձևերով բնականապես մոտ. պատճառ, ինչպես ասացինք, անխտիր միևնույն պայմանների տակ են ապրում: Ով որ միայն ազգ ազգից բաժանում է անունով և կրոնով, այնպիսին է կարող պատասխանել կամ մեկնել, թե ինչ է այն երևույթի բնական և հոգևորական պատճառը, որ թուրքը համ է առնում հայի վհատ և աղիողորմ խաղերից, տաղերից, ինչպես և հայը թուրքի խաղերից... Բայց այնպիսին, որ աչքի տակ առնու բնությունը, երկու ազգի կյանքերի միօրինակ և միաձև աճելությունը, երկուքի էլ ընկճված և հարստահարված վիճակը, այն ժամանակ բանը աշխարհ կլինի, որ հայը և թուրքը այս տեսակ կապերով միմյանց հետ կապված լինելով, անշուշտ, հոգեբանական երևույթներով իրարից չէին կարող հեռու լինել: Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոգին ցուցանում է արտաքին բնությունը»²:

Շեղարդ զննելով յուրաքանչյուր ժողովրդի բանավոր ստեղծագործության ինքնուրույն կողմի վրա, Նալբանդյանը դրա հետ մեկտեղ չի անտեսել նաև փոխառության և փոխազդեցության դերն ու նշանակությունը: Ինչպես նմանության հարցում, այնպես էլ այս դեպքում, նա մեկնակետ է ունեցել տնտեսական ու քաղաքական այն պայմանները, որոնք հիմք են հանդիսացել փո-

¹ Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 138:

² Նույն տեղում, էջ 183—184:

խաղղեցության համար: «Մեկ մարդ տասր տարի մնալով մի օտար ընկերության մեջ, քիչ շատ ընկնում է այդ օտար լեզվի, օտար ոգու ազդեցության տակ. հայր հազար տարի ընկած լինելով թուրքի, թաթարի և ուրիշների ազդեցության տակ, ինչպե՞ս կարելի է պահանջել, որ պատմական իրողությունքը իրենց կնիքը խոր չղրոշմեն ազդի սրտի և հոգու վրա. ինչպե՞ս կարելի է, որ այդ զրոշմը չցույանար նորա լեզվի և մտածելու ձևերի վրա»¹:

Նալբանդյանի առաջ քաշած բանագիտական կարևոր հարցերից մեկն էլ հանդիսացել է ժողովրդական բանահյուսության և դրականության միջև գոյություն ունեցող կապի խնդիրը: Նրա կարծիքով բոլոր ժողովուրդների մոտ էլ դրականությանը անմիջապես նախորդել է մի շրջան, երբ գեղարվեստական ստեղծագործությունը արտահայտվել է բանավոր կերպով՝ երգերի, առածների և նմանների միջոցով: Իր խոսքը մասնավորելով հայ գրականության «մանկության» շրջանով, Նալբանդյանը գրել է. «Գրականության լեզուիս, որչափ լոյս տան մեզ նշխարք մնացեալք առ հինաւորցն խորնոյ՝ յար և նման առ ամենայն ազգս՝ սկսանի վիպասանական երգովք զքաջագործութեանց զիւցազանց, զորս զեռ ի շորորող և ի հինգերորդ դարս երգիչքն ի Գողթան բամբուռ բերդէին»²:

Այս տեսանկյունով նա խիստ քննադատության է ենթարկում Ա. Խուդաբեյի «Обозрение Армении» գիրքը, ուր հեղինակն ի շարս բազմաթիվ «ծուռ ու սխալ» հայացքների ու «չնչին» կարծիքների (Նալբանդյանի խոսքերն են — Ա. Ղ.) այն միտքն է արտահայտել, որ իբր թե հին Հայաստանում մինչև քրիստոնեությունը մտավոր զարգացումը գտնվել է չափազանց ցածր աստիճանի վրա և գոյություն չեն ունեցել քիչ թե շատ ուշագրավ բանահյուսական ստեղծագործություններ³:

Նալբանդյանը ոչ միայն ընդունում է ժողովրդական բանահյուսության դոյության փաստը հին Հայաստանում, այլև երախտագիտական ջերմ խոսքեր է ասում բանահյուսության թանկարժեք գոհարներ մեջ բերող «խոհեմ, ծանր, խելացի և իմաստուն ծերունու»՝ Մ. Խորենացու հասցեին: «Հայոց հին դպրությունը ևս ունեցել է երգեր, ավանդություններ և առածներ, որոնցից մի քանիսը Խորենացի պատմական ծերունու միջնորդութենովը կամ այլ ոսկեփորիկների միջնորդութենով հասած են մեզ. որպես «Երկնէր երկին և երկիր», «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլ մի քանիսը, որոնց շատիցը բաղդի անգթանալովը այժմուս զրկված ենք, և այս քիչը, որ մեր ձեռքը հասած է, եզրակացնում ենք, որ պիտո է անհամար շատ ունենայինք այսպիսի երգեր մեր քաջերի վերա, որոնք կացած էին նահապետական ժամանակներում. պիտո է, որ ունենայինք և մեհենական կամ նվիրական երգեր, որովհետև զիցապաշտք, արեւապաշտք և կրակապաշտք էինք, իսկ ինքն ըստ ինքյան դուցարանությունը բանաստեղծություն է, և ի՞նչ հնար կար, որ առանց նվիրական երգերի կատարվեն նոցա պաշտամունքը»⁴:

¹ Մ. Նալբանդյան, *աշխ.*, էջ 184 — 185:

² Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 2, էջ 23:

³ Худобеев А., Обозрение Армени в географическом и литературном отношении, СПб, 1859, էջ 418:

⁴ Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 1, էջ 21:

Գրականության ժողովրդայնության հիմնական ցուցանիշը և առհասարակ «խոսելու կամ գրելու խորհուրդը» համարելով «ազգի (իմա՝ հասարակ ժողովրդի — Ա. Ղ.) հողին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը», «վարքը, բարքը, սովորույթը, ծեսերը», նրա «բարոյական և այլն և այլն վիճակը» «լույս հանելու» և «ազգի առջև դնելու» և նրան հասկանալի դառնալու հանգամանքը¹, Նալբանդյանը կարևոր տեղ է հատկացրել գրողի՝ ժողովրդական բանահյուսության ակունքներին մոտ լինելու և բանահյուսական լավագույն նյութերով զրականությունն առողջացնելու և թարմացնելու գործին։ Նա ջերմորեն ողջունել է հայ նոր գրականության այն հեղինակներին, որոնց ստեղծագործությունը կրել է իր վրա ժողովրդական բանահյուսության բարերար ազդեցությունը։ Նալբանդյանի կարծիքով այս տեսակետից օրինակելի գործ են կատարել նախ՝ Աբովյանը, և ապա՝ նրա հետևորդները՝ Պ. Պոռոջյանը։ «Կրիտիկա»-ում խոսելով Պոռոջյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մասին, մեծ քննադատը նրա «այնքան շատ և անհակառակելի» արժանավորությունների մեջ մեծապես գնահատում է նաև ժողովրդական բանահյուսության նյութերի տեղին ու հաջող օգտագործումը։ «Արդո հեղինակը հետևելով պ. Աբովյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առաժներ, ասացվածքներ։ Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին»²։

Նույն գործի մեջ խոսելով Պոռոջյանի վեպում օգտագործված ժողովրդական բառ ու բանից սերող «փոխաբերական ձևերի ու ոճերի» մասին, Նալբանդյանը նշում է, որ այդ «փոխաբերական ձևերը և ոճերը» «շատ տեղ աղ ու համ են տալիս գործին»³։

Ուշագրավ են նաև Նալբանդյանի հետևյալ խոսքերը, որ նա գրել է Պոռոջյանի ժողովրդական երգերի ոճով գրված ոտանավորների մասին։

«Պ. Պոռոջյանի ոտանավորքը մեծ հարազատություն ունին Արարատյան աշխարհի և տեղ-տեղ էլ ամբողջ ազգի ոգու և ձևի հետ»։ Եվ իբրև նմուշ մեջ բերելով «Սոս և Վարդիթերի» 74-րդ էջում տեղ գտած «Ջան գյուլումը», Նալբանդյանը շարունակում է. «Շատերը կան նույնպես ազնիվ, նույնպես գեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն «նանիկը» մեջ բերել (եր. 100), ուր հայ պառավի ոգին ու սիրտն ամեն հարազատությամբ թափել է հեղինակը»⁴։

Բարձր գնահատելով Աբովյանի ու Պոռոջյանի ստեղծագործական փորձը ժողովրդական բանահյուսության նյութերի, այդ թվում և առած-ասացվածքների օգտագործման բնագավառում, Նալբանդյանը ինքը ևս թե իր գեղարվեստական երկերում և թե մանավանդ հրապարակախոսության մեջ բազմիցս դիմել է ժողովրդի բառ ու բանի, մասնավորապես առածների ու ասացվածքների օգնությանը։

Ժողովրդական առածների ու ասացվածքների հաջող օգտագործման միջոցով մեծ հրապարակախոսը ավելի պատկերավոր, հասկանալի ու դիպուկ է դարձրել զաղափարական հակառակորդների դեմ ուղղված իր քննադատա-

¹ Մ. Նալբանդյան, *Այդ. աշխ.*, հ. 1, էջ 275, 279, հ. 3, էջ 168։

² Նույն տեղում, հ. 3, էջ 183։

³ Նույն տեղում, էջ 165։

⁴ Նույն տեղում, էջ 187—188։

կան խոսքը, առավել լավ է մերկացրել ու դիմակադերժել կղերա-պաճպանողական բանակի էությունը:

Այսպես օրինակ. «Թափառական հրեայի» թարգմանության «Հառաջարանի» մեջ խոսելով պաշտականության երգվյալ ջատագով Իգնատիոս Փափագյանի «Պատմություն եկեղեցական» գրքի մասին, Նալբանդյանը ծաղրանքով գրել է. «...Պարոն Փափագյանի նման մարդիկ աշխատություն են կրում մեր համար եկեղեցական պատմություն գրելու. հայոց ազգը շեն տուն հարս կր գնա» (ընդգծումը մերն է — Ա. Ղ.) Փափագյանից ուսանելով յուր եկեղեցու պատմությունը¹:

«Հիշատակարանի» մեջ թունոտ ծաղրի ենթարկելով կղերա-պաճպանողական բանակի կարկառուն դեմքերից մեկին՝ «Ճռաքաղ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների աշխատակից Հովսեփ Չերքեղյանին, «Հյուսիս-փայլի» և վերջինիս գործակիցների դեմ նրա դրած հայհույակա՛ն հողվածների ու ամբաստանագրերի համար, Նալբանդյանը գրել է.

«Պ. Չերքեղյանցը յուր բոլոր կյանքում միշտ դտանվել է վարագույրի քամակում և յուր հակալական գիտության ասպարեզը դրավորական կերպով բերած դրած չէ հանգիսի մեջ, որ հասարակությունը կարող լիներ բան հասկանալ և չհավատալ այնուհետև շար լեզուների խոսածին, թե «դատարկ տակառ մեծ ձայն է տալիս» (ընդգծումը մերն է — Ա. Ղ.)²:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատության մեջ խստորեն դատապարտելով հվրոպայի բուրժուական ազգերի փոխադարձ ոչնչացման գիշատիչ միտումը, Նալբանդյանը զայրույթով բացականչում է. «Հերիք է, որչափ կույր և ֆանատիկական ազգությունը ունի յուր եսական կողմերը. հերիք է, ասում ենք, որ մի ազգություն յուր մի շամփուր խորովածի համար մորթում է մյուս ազգության եզր» (ընդգծումը մերն է — Ա. Ղ.)³:

Կուրջ հետաքրքրություն են ներկայացնում Նալբանդյանի կողմից բանահյուսական առանձին ժանրերին տրված բնութագրումներն ու գնահատականները, ուր երևան է եկել նրա դիտական և պատմական մոտեցումը բնության և հասարակական կյանքի երևույթների գեղարվեստական անդրադարձումն հանդիսացող բանավոր ստեղծագործությունների նկատմամբ:

Խոսելով դիցաբանական ավանդությունների մասին, Նալբանդյանը նշում է, որ դրանք՝ վիպասանական երգերի հետ միասին մտնում են ժողովրդական բանահյուսության մեջ, իբրև նրա հնագույն ժանրերից մեկը և որ դիցաբանությունը «ինքն ըստ ինքյան բանաստեղծություն է», որի նյութն են կազմում հնագույն հեթանոս ժողովուրդների հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները, նրանց պատկերացումները արևի, կրակի և բնության մյուս ուժերի ու երևույթների մասին⁴:

Հուսավորչի կանթեղի ավանդություն-առասպելի կոնկրետ օրինակով Նալբանդյանը բացահայտել է աղ կարգի ստեղծագործությունների էությունն ընդհանրապես, նրանց ծագումն ու դոյությունը սլավոնավորված համարելով բնության երևույթների թյուր ընկալմամբ:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 67:

² Նույն տեղում, հ. 1, էջ 468:

³ Նույն տեղում, հ. 3, էջ 82:

⁴ Նույն տեղում, հ. 1, էջ 21:

Նալբանդյանի կարծիքով՝ «Որքան մոլորությունք որ կան աշխարհի երեսին, այդ բոլորը սկզբնաբար ծագել են կամ բնությունը թյուր հասկանալուց, կամ իսպառ չհասկանալուց: Եվ այդ մոլորությունքը ոչինչ ուրիշ բանով չեն փարատվիլ, մերժվիլ, եթե ոչ բնությունը ուղիղ հասկանալով»¹:

Նալբանդյանը Արաղածի կատարին կախված հրաշալի կանթեղի լույսը բացատրում է «բնության մեջ Լոգոս կրակներով կամ լույսերով», մասնավորապես՝ «Արաղածի վերականգնականության խնդրով» և նրա մեջ կատարվող ծծումբի շոգիացումով: «Հայոց ազգը, — գրում է նա, — Արաղածի վրա կրակ կամ լույս եթե չտեսներ, անհնար է, թե նա չեղած տեղից կանթեղ հնարեր և Լուսավորչին ուղարկեր այնտեղ Նարեկ քաղելու: Մենք այդ լույսը կամ կրակը Արաղածի վրա ընդունում ենք որպես իրողություն»²:

Նալբանդյանը հատուկ հետաքրքրություն է հանդես բերել Նուրինի մասին հայ ժողովրդի ստեղծած դիցաբանական երգ-ավանդության նկատմամբ՝ տեսնելով նրա մեջ հնուց եկող և ժողովրդի մեջ խոր արմատներ ունեցող մի ըստեղծագործություն: «Երաշտության ընդդեմ Նուրինի ավանդությունը, — գրել է նա, — թեև իսպառ չգիտենք թե ինչ բան է այդ և ինչ արարողության մնացորդ, բայց և այնպես, կարծում ենք թե հին բան լինի: Սաստիկ գրգռում է այդ բանը մեր հարցասիրությունը, մանավանդ երբ տեսնում ենք, որ շատ խոր արմատացած է նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մասին»³:

Հեղինակի հարցասիրությունը տվյալ դեպքում միանգամայն հիմնավոր է, իսկ նրա կոհսումները ավելի քան իրավացի:

«Նուրինի» մեջ յուրովի անդրադարձում է գտել հին Հայաստանի բնակիչների համար դարեր ի վեր կենսական բացառիկ կարևորություն ունեցող երկրի ոռոգման հարցը՝ կապված ջրի պաշտամունքի հետ:

Ահա թե ինչ է գրում Մ. Արեղյանը «Նուրինի» մասին: «Հին պաշտամունքի մնացորդ է երաշտի ժամանակ, անձրև բերելու համար, «Նուրին» ման ածելը, որ մնացել էր, ինչպես բազմաթիվ հին կրոնական արարողություններ, երեխաների մեջ»: Ըստ Արեղյանի «Նուրինը» ջրի դիցուհու տոնի օրը ջուր ցրելու հիշողություն է, կամ նրա արձանը գետը տանելու, կամ թե ջրեղրին կամ ջրերի մեջ տնկելու ծեսի մի գերապրով, որը «կատարվում էր ոռոգման առունների ջուրը երաշտին շատացնելու համար»⁴:

Ոչ պակաս հետաքրքրական ու կարևոր են նաև Նալբանդյանի գիտողությունները պատմական ավանդությունների վերաբերյալ:

Նշելով, որ պատմական ավանդությունների համար նյութ են ծառայել տվյալ ժողովրդի կյանքի այս կամ այն ժամանակաշրջանի նշանակալից դեպքերն ու դեմքերը, որոնք առավել կամ պակաս բախտորոշ նշանակություն են ունեցել նույն այդ ժողովրդի համար, Նալբանդյանը գրում է. «Որ ազգի մեջ կամենա թող լինի, բայց և այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն, որ առանց ամենայն պատճառի առաջանար»:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 146:

² Նույն տեղում, էջ 115 և 147 (տողատակի ծանոթ.):

³ Նույն տեղում, էջ 141:

⁴ Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ—Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 89, 91:

Պատմական ավանդությունների առաջացման հիմք հանդիսացած այդպիսի պատճառներ նա համարում է՝ «Կյանքի և ընկերական պայմանքը», «մի ստույգ պատահած իրողություն» կամ էլ՝ «մի գաղափար»¹:

Նախնական միանգամայն ճիշտ դիտել ու արձանագրել է նաև այն փաստը, որ ավանդությունները սերնդից-սերունդ և բերանից-բերան անցնելով՝ զգալի փոփոխություններ են կրում:

Նա գրել է. «Ավանդությունքը, որքան հեռանում են իրենց ծագման ժամանակից, այնքան շատ կերպարանափոխ են լինում, ընկնելով ժամանակների և հասկացողության ազդեցության տակ, մինչև այն աստիճան, որ շատ անգամ դժար է լինում հասկանալ կամ մեկնել»²: Եվ ապա. «...Մի անգր, կամ մի իրողություն, որ ստուգապես պատահած էր, դնենք, Թորոսի ժամանակ, այդ բանը համարվում է եղած կամ Մինասի ժամանակ, որ շատ առաջ էր ապրել Թորոսից, կամ Նիկողոսի, որ Թորոսից շատ դարեր հետո էր ծնել»³:

«Ամեն բան հնացնող և մաշող ժամանակը հնացնում և մաշում է, այո, շատ անգամ և իսպառ չքացնում է այս կամ այն ավանդությունը, այս կամ այն ծեսը և սովորությունը: Շատ անգամ թերևս այդ բոլորը մնալով գործադրության մեջ, այնուամենայնիվ տալիս են դարերի ազդեցության իրենց հարկը. նոքա զրկվում են իրենց ներքին խորհրդից և դառնում են մի պիտակ բան...»⁴:

Զբաղարարվելով պատմական ավանդությունների ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների փաստի լոկ արձանագրումով, Նախնական փորձել է բացահայտել նաև այդ փաստի պատճառները: Նա միանգամայն իրավացիորեն պատմական ավանդությունների փոփոխման պատճառը համարում է սոցիալական պայմանների մեջ կատարված փոփոխությունները («պատճառ՝ կյանքի և ընկերական պայմանքը փոխված են»): Ըստ Նախնականի՝ «ժամանակի առաջ ու հետ խաղալը» ավանդություններում կախված է վերջիններիս մեջ հանդես եկող պատմական անձանց ու հերոսների, «ազգի մեջ ունեցած խորհրդից, արժանավորությունից ու հատկությունից»⁵: «Հայտնի է, — գրում է նա, — թե մի պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվել մի սուրբի, որպես նաև մի քաջագործություն մի երեկի զորավարի: Եթե ազգը Թորոսի օրով տեսել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, ազգի հետագա գավակները այդ անցքը անպատճառ կխլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, որ կամ առաջ է ապրել Թորոսից կամ վերջը, որի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության: Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, որ այդ մարդը շատ դարերից հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան սքանչելի անցքերի և դործերի, իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար, զրկվում են իրենց ստուգապես ունեցածից»⁶:

Ելնելով վերոհիշյալ փաստից, Նախնականը բացահայտում է ավանդությունների հետ կապված մի լական հանգամանք ևս, որ է՝ անվան երկրորդա-

¹ Մ. Նախնական, նշվ. աշխ., հ. 3, էջ 144—145:

² Նույն տեղում, էջ 144:

³ Նույն տեղում, էջ 163:

⁴ Նույն տեղում, էջ 163, 115:

⁵ Նույն տեղում, էջ 145:

կան դերը ավանդությունների ժամանակի որոշման գործում: Իբրև օրինակ վերցնելով Հուսավորչի կանթեղի ավանդությունը, նա միանգամայն ճիշտ կերպով նշում է, որ որևէ անվան առկայությունը այս կամ այն ավանդության մեջ բավական չէ այդ ավանդության ստեղծման ժամանակը որոշելու համար:

«Հուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չէ կարելի պնդել, թե ստուգապես շորորոգ դարումն է երևել այդ կրակը: Այո՛, կարող էր և այն ժամանակ երևիլ. մեր խոսքը այդ չէ, այլ այն, թե լոկ անունը չէ կառող ընդունվիլ ուրպես ապացուցություն ժամանակի, ավանդությանց մեջ»¹ (ընդգծումը մերն է — Ա. Ղ.):

Դիցաբանական առասպելների և պատմական ավանդությունների մասին Մ. Նալբանդյանի հայտնած վերոհիշյալ մտքերն ի մի բերելով մենք ստանում ենք մի ամբողջական տեսություն, որն իր մեջ ընդգրկում է բանահյուսական տվյալ ժանրի հետ կապված բոլոր էական հարցերը և տալիս է այդ հարցերի բազմակողմանի ու խորը լուսարանությունը: Ժողովրդական առասպելների և պատմական ավանդությունների նալբանդյանական բնութագրումները հիանալի դրսևորում են նրանց հեղինակի խորաթափանց ու սուր միտքը և ընդհանրացումներ անելու մեծ կարողությունները: Այդ բնութագրումների լույսի տակ միանգամայն պարզ է դառնում առասպելների ու ավանդությունների ոչ միայն հասարակական-դադափարական բուն էությունը, այլև դարերի ընթացքում նրանց կրած փոփոխությունների իրական պատկերը:

Բերված փաստերով, հիմնականում, սպառվում են Նալբանդյանի դրական ժառանգության մեջ մեզ հետաքրքրող հարցի շուրջը եղած տվյալները: Իբրև եզրակացություն անհրաժեշտ ենք համարում ընդգծել հետևյալը.

1. Ձարգացնելով 30-40-ական թվականների հայ լուսավորիչների և առաջին հերթին Խ. Արսվյանի հայացքները ժողովրդական բանահյուսության մասին, Նալբանդյանը 50-60-ական թվականներին մեր իրականության մեջ նշանավորեց հայ բանագիտական մտքի նոր և ավելի բարձր աստիճանը:

2. Մ. Նալբանդյանի դիտողություններն ու կարծիքները ժողովրդական բանահյուսության մասին պետք է արժանի տեղ գրավեն հայ բանագիտության պատմության մեջ, որովհետև դրանք իրենց հիմնականում ճիշտ ու դիտական մեկնակետի շնորհիվ ունեն ոչ միայն պատմական, այլև այժմեական նշանակություն:

М. НАЛБАНДЯН И УСТНОЕ НАРОДНОЕ ТВОРЧЕСТВО

А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Великий армянский революционный демократ Микаэл Налбандян в своем творчестве неоднократно обращался к фольклору. Однако вопрос об отношении Налбандяна к устному народному творчеству до сих пор является одной из неисследованных областей его литературного наследия. Отдельной работы об устном народном творчестве Налбандян

¹ Մ. Նալբանդյան, *սոց. աշխ.*, հ. 2, էջ 145:

не оставил, но мысли, высказанные им по этому вопросу, неразрывно связаны с эстетическими взглядами писателя и разбросаны в его публицистических, литературно-критических и историко-филологических трудах.

В статье указывается, что взгляды Налбандяна на устное народное творчество возникли и развились в процессе его непримиримой идейной борьбы против современных ему реакционных течений. Он отличал в фольклоре истинное народное творчество от тех произведений, которые выражали настроения и психологию социальной верхушки, и показывал антинародную сущность этих произведений.

Сходство памятников фольклора разных народов Налбандян объяснял материалистически, указывая на сходство социальных условий. При этом он не исключал возможности заимствований и взаимных влияний.

Развивая взгляды армянских просветителей 30—40-х годов XIX века и, в первую очередь, Х. Абовяна, Налбандян придавал большое значение близости писателя к истокам народного творчества. Так, он высоко ценил Х. Абовяна и П. Прошьяна, в произведениях которых умело и широко использовано народное творчество.

Научный подход Налбандяна к фольклору выразился в глубоких характеристиках и оценках, которые он дал отдельным его жанрам.